ՅԱՌԱՋԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

1886

№ 138 ԵՐԵՔՇԱԲԹԻ 22 Օգոստոսի

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

Ա. Ա. Ա.

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(Վահագնաժամ ՃԼ)

Ամենօրյա հվատքվոր վիպակներ

Ամենօրյա հվատքվոր վիպակներ ես ուզում գրել, որ ամեն օր մի գլուխ կարդալով՝ ընթերցողը մի ամսից հետո ունենա մի ամբողջ գիրք։ Ես ուզում եմ գրել այնպիսի վիպակներ

ԴՈՒՅՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ

Թ. Տ.-Ն Թ.

Հայ Ս.

Ներկայ համարում տպագրվում է Ազգային ժողովի նախագահ Ներսես Աբգարի Ղազարյանի ելույթը՝ ասված Ազգային ժողովի հունիսի 6-ի նիստում՝ Ազգային ժողովի կանոնակարգության մասին օրենքի նախագծի քննության ընթացքում։

Պարոնայք, ես ուզում եմ ասել մի քանի խոսք ներկայ նախագծի մասին։ Ես ուզում եմ ասել մի քանի խոսք, որովհետև ես ինքս ներկա եղել եմ այն հանձնաժողովի նիստերին, որ կազմել է այդ նախագիծը

գած ունի կարմիր կօշիկներ և կրում է գլխին արծաթով զարդարած չալմա։ Պրինցը իւր սվիտայով իջևանած է Գրանթ-Օտել հիւրանոցում, ուր նրանք օրական վճարում են 500 ֆրանկ։

***

ԱրքեցուԹիւն հնումն Գերմանիայում։ 1492 թ. Շտուտգարտում քաղաքային վարչութիւնը հրամանագրեց, որ նոր պաշտօն ստացող ամեն մի դատաւոր բերէ իւր հետ խորհրդի սենեակը մի արծաթէ դաւաթ իւր դիրքով։ Այդ պատճառով քաղաքային խորհրդի մէջ ընդունած մի անդամ պէտք է թողնէր այնտեղ իւր ռոճկի 1/4 մասը, կանցելիարիանեբում կային առանձին սենեակներ, ուր աստիճանաւորները և գրագիրները կաղդուրում էին իրենց գինով։ Հերցօգ Քրիստօֆը որոշեց, Թէ ամեն մի կանցելիարիայում որքան գինի պիտի գործ ածուի։ Զափազանց խմում էին Տիւբինգինի համալսարանում։ Մինչև անդամ պրօֆեսօրների կանայքն էլ սիրում էին խմել չափից աւելի։ Ինչպէս օրինակի համար գրում են, Թէ Կրուղիուս և Չօմբերգիր պրօֆեսօրուհիները չատ գինի խմելուց յետոյ, հասարակութեան մէջ բարձր էին խօսում, անդադար երդուելով Աստուծոյ անուամբ, հապա կարողանում էին եկեղեցին գնալ և այնտեղ իրենց լաւ չէին պահում։ Այն ժամանակներում համարեա Թէ ամեն առաւօտ գնում էին փողոցներում քնած հարբեցողներ և Նիւրենբերգում քաղաքային վարչութիւնը սայլեր էր պահում, որ այդ արբեցողներին հասցնեն իրենց տները։ Մինչև անգամ նոյն ինքը հերցօգ Քրիստօֆը, որ չափաւոր էր խմիչք գործ ածելու մէջ, իւր նամակներում խոստովանում է, որ չափազանց չատ էր խմում և վերջին նիւսեբրի ժամանակ տանում էր իւր հետ մի քանի տակառ գինի։ Կարլոս V-րդ կայսրը Բէդենսբերգում իշխանների ժողով գնալու ժամանակ տանում էր իւր հետ 4,000 վեդրօ գինի։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԴՈՐՏԱԿԱՎՈՒԹԻՒՆԻՑ

20 Օգոստոսի

ՓՐԱՆՑԻՆՍԲԱԴ. Այսօր կէս օրին այստեղի ռուսական եկեղեցում մեծ շքեղութեամբ կատարուեցաւ ռուսական արտաքին գործերի մինիստր պ. Գիրսի գտեր ամուսնութիւնը պ. Բօզետտիի հետ։ Պատկի հանդիսին ներկայ էին Թագաւոր Կայսրի և բումինիական Թագաւորի ներկայացուցիչները։

ՍՕՖԻԱ. Իշխան Ալէքսանդրը ժամանեց Ֆիլիպպօպոլ։ Սօֆիայում կը լինի գուցէ ուրբաթ երեկոյեանը։

ԲՈՒԿԱՐԵՍՏ. Բօլղարիայից այժմ այստեղ եկած քաղաքական դաղթականներին յայտնուած է, Թէ նրանք ուր կամենան կարող են իրենց համար բնակութեան տեղի ընտրել, բացի Դանուբի մօտ եղած նահանգներից։ Զեռնարկած այդ միջոցների պատճառը Բումինիայի դէպի Բօլղարիան ունեցած չեզոք յարաբերութիւնն և Բումինիայի այդ բարեկամական երկրում ծագած դէպքերն են։

21 Օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Ռուշչուկի ռուսական հիւպատոսարանի կառավարիչը օգոստոսի 18-ին արտաքին գործերի մինիստրին յանձնեց բօլղարական Ալէքսանդր իշխանի անձամբ տուած հետեւեալ հեռագիրը, որ ուղղուած է Թագաւոր Կայսեր։

«Ձերդ Մեծութիւն. Նորից ձեռքս առնելով իմ երկրի կառավարութիւնը, համարձակվում եմ իմ խորին երախտեաց հաւաստիքը մատուցանել Ձերդ Մեծութեան, որ Ռուշչուկի Ձեր Կայսերական Մեծութեան ներկայացուցիչը՝ ինձ ընդունելու ժամանակ, իւր պաշտօնական ներկայութեամբ յայտնի արաւ բօլղարական ժողովրդին, որ Կայսերական կառավարութիւնը չէ կարող հաւանութիւն տալ իմ անձի դէմ ուղղուած յեղափոխական գործին։ Միևնոյն ժամանակ Թոյլատուութիւն եմ խնդրում արկանելու իմ շնորհակալիքս Ձեր Կայսերական Մեծութեան առաջ, գեներալ իշխան Դօլգօրուկովին արտաքոյ կարգի յանձնարարութեամբ Ձեր Մեծութեան կողմից ինձ մօտ ուղարկելու համար։

Որովհետև նորից ձեռքս առնելով օրինական իշխանութիւնը, ես իմ սեպուհ պարտքս եմ համարում յայտնել Ձերդ Կայսերական Մեծութեան իմ հաստատ մտադրութիւնս, որ է յանձն առնել ամեն զոհաբերութիւններ, որպէս զի կարողանամ Ձեր Մեծութեան վեհանձն դիտաւորութեան նպաստել, այն է՝ հանել Բօլղարիան իւր այժմեան ծանր ճգնաժամից, խնդրում եմ Ձերդ Մեծութիւնից, Թոյլ տալ իշխան Դօլգօրուկովին ինձ հետ անմիջապէս ըստ կարելւոյն շուտով համաձայնութիւն կայացնէ։ Ես բաղդաւոր կը լինիմ ներկայացնելու Ձեր կայսերական Մեծութեան իմ անխարդախ հաւատարմութեան վերջնական ապացոյցը դէպի Ձեր Օգոստափառ անձը։

Արքայական սկզբունքը հարկադրեց ինձ վերականգնելու օրինականութիւնը Բօլղարիայում և Ռումելիայում։ Ռուսիան շնորհեց ինձ իմ Թագը և ես այդ Թագը պատրաստ եմ հանձնելու նրա Թագաւորին։

Վերոյիշեալ հեռագրին Նորին Կայսերական Մեծութիւնը բարեհաճեց պատասխանելու հետևեալ հեռագրով։

«Նորին Բարձրութեան բօլղարական իշխանին Ֆիլիպպօպոլ։ Ես Ձեր Բարձրութեան հեռագիրը ստացայ։

Չեմ կարող հաւանութիւնս տալ Ձեր Բօլղարիա վերադառնալուն։ Նախատեսելով երկրին հասանելիք չարագուշակ հետևանքները, որ արդէն այնքան ծանր փորձութիւնների է ենթարկուել, իշխան Դօլգօրուկովի առաքելութիւնը տարաժամ պիտի համարուի։

Ես բոլորովին ձեռնպահ պիտի մնամ միջամտելուց գործերի այն ցաւալի դրութեանը, որին հասցրած է այսօր Բօլղարիան։

Քանի այդտեղ էք մնալու՝ Ձեր Բարձրութեանն է մնում որոշելու, Թէ ինչ է հարկաւոր ձեզ անել։

Ինձ եմ վերապահում դատել այն մասին Թէ ինչ է պարտաւորեցնում Ինձ Իմ ծնողիս յարգելի լիշատակը, Ռուսիայի շահերը և խաղաղութիւնը Արևելքում»։

Պատերազմական մինիստրը երէկ վերադարձաւ Պետերբուրգ։ Վէնեայի վերայով ստացած տեղեկութիւնները հաղորդում են, որ Բօլղարիայի Հարաւ-արևմտեան կողմը հաւաքած զօրքի նշանաւոր մասը մտադիր է եղել գինու զօրութեամբ դիմադրելու րումելիական տեղապահ զօրքին, որ գնում էր Սօֆիայի վերայ այնտեղ կարգ վերականգնելու պատրուակով։ Խօսում են մինչև անգամ չորեքշաբթի բօլղարական և րումելիական զօրքերի մէջ տեղի ունեցած ընդհարումների մասին։

ԵԼԻՆԱ. «Հաւատի գործակալութիւնը» հաղորդում է, որ րումելիական վեց գունդերով Սօֆիա հասած իշխանի կողմնակից գնդապետ Մուտկարովը կալանաւորել է միտրօպօլիտ Կլիմենտին, Կարավելովին, Ցանկովին, Նիկիֆօրովին և ուրիշներին, որոնք օգոստոսի 9-ի յեղափոխութեան մասնակցել են։ Բայց, իշխանի հրամանով, Կարավելովին և Ցանկովին արձակել են։ Յեղափոխութեան մասնակցող զօրքերը յետ են մղուած դէպի Կիւստենդիլ։

Խմբագիր հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳՆԱՑՔՆԵՐԻ ԵՐԹԵԻԿՈՒԹԻՒՆԸ
«ԹԻՖԼԻՍ» ԿԱՑԱՐԱՆՈՒՄ.
Կառքեր, որոնք ճանապարհին գիշերելու կայարաններ ունին։
Թիֆլիսից դուրս են գալիս առաւօտեան 8 ժամին. վլադիկաւկաս գալիս են երեկոյեան 5 ժ.—11 րոպ. և 5 ժ. 43 րոպ. մէջը։
Վլադիկաւկասից դուրս են գնում առաւօտեան 9 ժամին. Թիֆլիս գալիս են երեկոյեան ժամի 4 և 44 րոպ. 5 ժ. 25 րոպ. մէջ։

ՇՕԿՕԼԱԴ
Ս. ՍԻՈՒ ԵՒ ԸՆԿ.
(Ц. 4657) 50—28

ԲԱԼԶԱՄ ԵՑԿԼԻՊՏԻ
Ա. ԷՆԳԼՈՒՆԴ ԿՕՍՄԵՏԻԿԻ
Բալզամ Էկալիպտի գործադրութեան ժամանակ արգելում է մազերը թափելուն, չափազանց ամրացնում է նրանց արմատը, ոչնչացնում է թեփը և թարմացնում է գլխի մորթը։ Մի շիշի գինն է 1 ր. 50 կ. Ճանապարհածախսով 2 ր.—2 շիշը Ճանապարհածախսով 3 ր. 50 կոպէկ կեղծ լինելուց զգուշանալու համար, խնդրում են պահանջել կարմիր թղթանքով Ա. Էնգլունդի առորադրութիւնը Ս. Պետերբուրգի կօսմետիական լաբարատորիայի մարկան։
Կարելի է առնել Ռուսիայի կայսերութեան մէջ յայտնի դեղատներում.
Գլխաւոր պահեստը ամբողջ Ռուսիայի համար գտնվում է Ս. Պետերբուրգում, Ա. Էնգլունդի Ս. Պետերբուրգի կօսմետիկան լաբարատորիայում, Լիտէյնայա № 38։
Թիֆլիսում ծախվում է Կովկասեան դեղօրէից առևտրական ընկերութեան մէջ։
(Ц. 28121) 13—9

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն Մարսէլի և Բաթումի մէջ
Շաբաթ, սեպտեմբերի 3-ին, «ՄԵՕԶ» (Meuse) շոգենաւը, նաւապետ «ՏԻԲԱԼ» (Tibal) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսօն, Կ. Պօլիս և Մարսէյլ։
Տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում՝ պ. ԳԱՐԱՆԻՕՆԻՆ, Թիֆլիսում՝ պ. ՐԻՆՕԻՆ, Նախկին գաէլէյա Աբծրուևիների № 103. 4—1

ՇԱՏ ՉԱՓԱՒՈՐ ՎԱՐՁԱՏՈՒԹԵԱՄԲ
ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է ԵՒ ՓՈՐՁԱՌՈՒ
ՀԱՇՈՒԱՊԱՀՆԵՐ,
Որոնք կարող են ԿՐԿՆԱՏՈՒՄԱՐ ՀԱՇՈՒԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ հիմնաւորապէս վարել առևտրական ամեն ճիւղերին վերաբերեալ հաշիւները, Թէ ՀԱՅՈՑ և Թէ ՌՈՒՍԱՑ լեզուներով։
Ընդունում եմ նոյնպէս
Ապացուցագրերի, հաշուեցոյցերի և հաշուեգրքերի երեսով ՀԱՇԻՒՆԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ պատուէրները։
Իմ հասցէն՝ «Նոր-Դարի» խմբագրատանը։
(р) 20—4

ՄՈԶԴՈԿԻ ՀԱՅՈՑ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ համար հարկաւոր են ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ և ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՆԵՐ հայոց, ռուսաց լեզուների և երգեցողութեան համար։ Ցանկացողները թող դիմեն հոգաբարձութեան։
Աւագ քահ. Տուրփայեան։
3—2

Սեպտեմբերի I-ին վիճակահանութեան տանող պետական 5% տոմսերի ծախելը, յետաձգելով վճարի ժամանակամիջոցը, կը շարունակուի մինչև օգոստոսի 31-ը։ Տոմսերի համարները կը հրատարակուին հեռագիրներով։ Դնողները, ըստ իրենց ցանկութեան կարող են մասնակցել միայն սեպտեմբերի վիճակահանութեանը։ Տոմսերը ապահովացնելու համար վճարվում է 45 կոպէկ։ Օտարաքաղաքացիներին 17 րուբլի ստանալուց յետոյ, անշուշտ կուղարկուի վկայական №-ով և սերի տոմսով։

Տեղեկութիւններ իմանալ կարելի է «Գ. Բլօկկի» բանկի ֆիրմայի գործակալ պ. Մալիշեվից։ Թիֆլիս, Գօլովինսկի պրօսպեկտ, մաղազին «Վերիա»։
2—2

ՊԱՀԵՍՏ
ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐԻ
ԴՈՐՏԱՏՈՒՆ

ՓՐԻՍՏԵՐ ԵՒ ՐՕՍՄԱՆ
Նոր պատենտի տէր կատարելագործուած
ԿԱՏԱՐԵԱԼ ԱՊԱՀՈՎԱՑՈՒՄՆ
Ծախվում է
ԺԱՄԱՆԱԿ ՏԱԼՈՎ
Միակ գործակալ՝ Է. Ֆ. Աուֆէրման. Թիֆլիս Երևանեան հրապարակ. տ. Տէր-Աստուածատրեանցի
100—84

Պատրաստելը և ծախելը վճռել է Մոսկուայի բժշկական վարչութիւնը

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԱԿԱՆ
ԲՕՐՆՕ-ՏԻՄՕԼՕՎԵԱՆ ՕՋԱՌ
ՊՐՕՖԻԶՕՐ Գ. Ֆ. ԻՒՐԳԵՆՍ
Բոլորովին ոչնչացնում է պեպենները, դեղին բծերը և չափազանց քրտինքը
Աւազակներից է ինչպէս անուշահոտ և էժան յաջողութեան առնեցող օճառ
ՄԻ ԿՏՈՐԻ ԳԻՆՆ Է 50 Կ.
Ծախվում է բոլոր լաւ դեղօրէից մաղազիններում և դեղատներում։ Բոլոր Ռուսիայի համար գլխաւոր պահեստը գտնվում է Մոսկուայում Կ. Ի. Ֆերբէյնի մօտ։ Թիֆլիսում դեպօն գտնվում է Պօպովի մօտ։
(Ц. 19197) 25—7

Дозволено цензурою. Тифлисъ, 21-го Августа 1886 г. Տպարան Մ. Դ. Ռոտինեանց և ընկ. Типографія М. Д. Ротиніанцъ и К-о Гол. пр., д. № 41